

հանդիսաւոր պատարագ։ Պատարագիչ էր միաբանութեանս ներկայ Եպիսկոպոսներից աւագագոյնը՝ Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանը։ Երգում էր Կոմիտաս վարդապետի քառաձայն խումբն արտասովոր ոգեորութեամբ։ Պատարագի վերջում տեղի ունեցաւ հայրապետական մազթանք, Վեհափառի աջն առնելու (համբուրելու) սովորական արարողութիւնը և ապա այս տարուայ ճեմարանաւարտ սաները հոգեհանգիստ կատարել տուին մեծ բարերար և մեծագործ Գէորգ Խ կաթողիկոսի շիրմի վրայ։ Պատարագից յետոյ սեղանատուն հրաւիրուեցին ներկայ Եղող բազմաթիւ պատուաւոր հիւրերն՝—արք և կանայք առհասարակ, Թէև շատ մեծ բազմութիւն չէր եկել այս տարի՝ մանաւանդ գիւղերից, որովհետեւ աշխատանքի ժամանակն էր, բայց դրա փոխարէն նկատելի էր մի ընդհանուր տրամադրութիւն։ Սեղանատանը խօսուեցան բաժականառեր, որոնցից յետոյ Երգուեցին պատշաճաւոր շարականներ և Երգեր, Ուստաւորներն ու հիւրերը մեկնեցին քաղցր տպաւորութեան տակ, ամուր կապելով իրենց սրտերն ու զգացմունքները գարերից ի վեր պաշտելի սրբութեան հետ։



### Ա. ԹԱՐԴՄԱՆՉԱՅ ՏՕՆԸ ՕՇԱԿԱՆ ԳԻՒՂՈՒՄ:

Կան սուրբեր և նրանց համար սահմանուած տօներ, որոնք անողոք ժամանակի շնորհիւ, շնորհիւ մարդկային գիտակցութեան և խիստ քննադատութեան, նսեմանում և համարեա մոռացութեան են տրւում։ Բայց կան և այնպիսիք, որոնց կատարած գործի մեծութիւնն ըմբռնելու համար հարկաւոր է լոյս և որքան մեծանում է ժողովրդի գիտակցութիւնն, այնքան աւելի հանդիսաւոր են դառնում այդպիսի նշանաւոր մշակների գործերը և հետզհետէ արժանաւոր վայելչութեամբ տօնում նրանց յիշատակը։

Այսօր մեր խնկելի թարգմանչաց յիշատակն առաւել սրտագին և հանդիսաւոր կերպով է տօնւում՝ քան սրա նից 100—200 տարի առաջ, երբ գիրքը անմատչելի էր ժողովրդին և անհասկանալի նոյն խակ հօգևորականներին և այդ տօնը կը տօնուի աւելի մեծ հանդիսաւորութեամբ, երբ ժողովրդի բոլոր խաւերը կը մրտնեն, թէ ինչ հսկայական գործ կատարեցին մեր թարգմանիչներն՝ Ատհակ և Մեսրոպ իրենց աշակերտաներով։ Այս տարի լրանում է 1500 տարին մեր տառերի գիւտից։

Տառեր և գրանից առաջ հայ ազգն անպատճառ ուներ Յունաց և հռովմէացւոց, պարսից ու ասորոց գրացի, քէտական ծագում և քաղաքակրթութիւն ունեցող հայ ազգը (այս կարծիքին է Խէնսոն գիտնականը, տես Արարատ յունիաթ 1904 թ. երես 537 և 538). Չէր կարող առանց տառերի ապրել, բայց այնպիսի կատարելագործուած այփուրէնը, որպիսին մեղ տուաւ ո. Մեսրոպ, անշուշտ չունէինք, ապա թէ ոչ, նոր տառելու գտնելու կարիք չէր զգացուիլ։ Բայց այդ չէ թարգմանչաց գործի մեծութիւնը. անշունչ տառեր գտնելու չնորհիւ չէ, որ նրանկը անմահացան ոչ միայն մեղ, այլ և բոլոր լուսաւոր և լուսասէր ազգերի համար, այլ նրանում, որ այդ տառերն ունենալուց յետոյ նրանք ստեղծեցին քրիստոնէական դրականութիւն՝ — Աստուածաշնչի հայերէն թարգմանութիւնն ու մաշտոց, շարական և ժամագիրք, գիտութիւն և պատմութիւն և անյայտ կորչելու վտանգին դատապարտուած ազգային հերոսների անսւններն ու գործը հաղորդեցին յետնորդ սերունդներին։

Այդ մեծ մարդկանց մեծ գործի արդիւնքն են Խօրենացին և Եղիշէն, Ղաղար և Եղնիկ, Կորիւն և Դաւիթ։ Նրանց վարած հողում բուսան հինգերորդ գարու Աւարայրի հերոսները և Եկեղեցու Ղեծնդներն ու Յովակիները։ Այն, ո. թարգմանչաց տօնը հայ ազգի ամենամեծ և առաջնակարգ տօն է, տօն լուսոյ և գրի, գիտութեան և գրականութեան և նրա մշակների՝ անդրանիկ մշակների տօն։ Թէև սովորական է ասել, որ հայ ազգը իւր գործիչներին

քաղցած պահել և հանդիսաւոր թաղել միայն գիտէ, սաւ կայն թող ս. Թարգմանչաց տօնը օրինակ լինի մեզ, որ հայ ազգը նաև անմահացնել և գնահատել գիտէ, թէ և ոչ այդ մշակների ֆիզիքական կենդանութեան ժամանակ։

Մխիթարական էր տեսնել, թէ ինչպէս հեռաւոր տեղերից և մերձակայ գիւղերից ահագին բազմութիւն էր հաւաքուել ս. Մեսրոպի գերեզմանին երկրպագութիւն տալու և երտխտամատոյց լինելու քրիստոնէական սուվորութեամբ՝ նրանց կատարած մեծ գործի համար Աւխտագնացութիւնը անգիտակից և մի միայն կրօնական զգացմունքի դրդմամբ չէր, ոչ ամենը երեսին նկատւում էր Թարգմանչաց մեծ գործը գիտակցելու, գէթ մասամբ գիտակցելու տրամադրութիւնը և կրօնական ազգային ուժեղ զգացմունքը։ Պատարագից յետոյ այդ ահագին բազմութիւնը ցրուեց Օշականի այգիներն ու Վեհափառ Հայրապետի ամառնային մեծ այգին և տասնեակ ընտանիքներ և հարիւրաւոր մարդիկ մի մի ընկերական սեղանի շուրջը բոլորելով՝ արժանաւորապէս դրուատում էին այդ օրուայ ինկելի սրբոց անունն ու գործը։ Բայց այդ գեռ մի միայն մի քայլ է, թոյլ և առաջին քայլ՝ արժանի և իրոք վայելուչ կերպով տօնելու ս. Թարգմանչաց տօնը։ Դեռ մենք փորձ անգամ չենք արել կատարելու այն, ինչ որ գործեց ս. Մեսրոպը՝ Հայաստանի բազմաթիւ նահանգներում, տալով նրանց գիրք և գպրոց, լոյս և ճշմարիտ հաւատ։ Դեռ ս. Մեսրոպի տառերը շատ տեղ անվերծանելի նշաններ են մեր գիւղացիների համար և հայերէն գիրն ու գրականութիւնն անմատչելի։ Ա. Թարգմանչաց տօնի օրը՝ երբ մենք հաւաքուելու լինինք Քասախ գետի գեղանկար և այգիներով լի ձորի գլխին հանգչող ս. Մեսրոպայ գերեզմանի մօտ, պէտք է հաշիւ տանք մեղ՝ թէ ինչ աշխատանք ենք գործ դրել ընդհանրացնելու հայ ժողովրդի մէջ գիրն ու գիրքը, գրականութիւնն ու գիտութիւնը, ոէր և հաւատ։ Քանի հարիւր հազար գիրք ենք տպել ու տարածել հայ ժողովրդի մէջ, ինչ չափով

ենք նրան լուսոյ մասնակից արել և զարկ տուել նրա դիտակցութեանը՝ երբ մենք այդ շաւզով կընթանանք և այդպէս կը գործենք, երբ այդպիսի հաշիւ ներկայացնելու համար կը հաւաքուենք այդ սրբազան գերեզմանի շուրջը, նոր միայն աւելի արժանաւոր կերպով կատարած կլինենք մեր պարտքը և արժանաւոր ու անզուգական սրբոց խնկելի յիշատակը:

**Ե. Ճ. Վ. Մ.**

— 1 —

Ամսոյս 25-ին ազգիս Վեհափառ Հայրապետը բարեհաճեց օդափոխութեան համար փոքրիկ ճանապարհորդութիւն կատարել դէպի Գօշ (Կուաշ աւան Արշակունեաց) և այնտեղից Թալիշ (Արուճ աւան Մամիկոնեան նախարարների): Գօշ գիւղը գտնուում է Արագած կողերին, ունի գեղեցիկ բուսականութիւն, պատուական աղբիւրներ, մեծ և նշանաւոր առու Համբերթի գետակից վերցրած՝ դիւղի մօտ մի շարք գեղեցիկ ջրվէժներով, որոնք հսկայական ոյժ են կազմում և կարող են գիւղին ահանդին օդուտ բերել: Գիւղից բացւում է հրաշալի տեսարան դէպի Մասիսն և Արաքսի հովիտը, որի ծայրը կորչում է արևելքում: Գիւղում կան բազմաթիւ հնութիւններ և խաչքարեր: Աւանի հին վանքի տեղի այժմս գտանաւում է գիւղի նորակառոյց եկեղեցին, որտեղ ո. Գէորգայ գերեզմանն է և նշանաւոր ուխտատեղի: Գիւղի հիւսիս արևմտեան կողմում գտնուում է իւանէ Արդութեանի օրով շինուած փոքրիկ եկեղեցու աւերակներ վրացերէն արձաննագրութեամբ և բազմաթիւ այրեր, որտեղ մեծ բազմութիւն է ապրել գուցէ գեռնախսապատմական ժամանակներում: Այրերի մէջ կան կարասներ, կրաշէն հորեր՝ երեխ ցորեն և այլ պաշարեղէն պահելու:

Աղաւնատուն կոչուած գիւղում ծերունազարդ Հայրապետը փոքր ինչ հանգստանալուց յետոյ՝ մեկնեց դէպի